

Այդ դեռ բաւական չէր. մի խումբ թղթա-
մոնէր ահա երեք ամիս է ապօրինի թղթատուն
են բացել և զիշեր ցերեկ խաղում են: Եւ մեր
տանուտէն ու օգնականը փոխանակ խափանե-
լու այդ անբարոյականացնող հիմնարկութիւնը,
իրանք ևս յաճախում են: Այդ թղթատունը
գրաւել է և այնպիսի մարդկանց, որոնք իրանց
կենտրոնում թուղթ չէին խաղացել. և այդ հիմ-
նարկութեան պատճառով ահագին տարածաշ-
նուիրաններ և խռովութիւններ են ընկել ընտա-
նիքի անդամներէ մէջ: Այդտեղ չեն բաւականա-
նում թղթախաղով միայն, այլ յաճախ սարքե-
կն չափերի ընտանիքում միայն ցամաք հաց
կամ համեստ ապրուստ ունենա: Անցեալներում
մէկը տանու է տուել իր կարողութիւնը մի
մեծ գումար և երբ պահանջել են, ինչպէս
պատմում են, արտասովոր աղաչել է իր որդի-
կերանց խնամքին: Տեղի են ունենում և անա-
խորժ գէղարքեր ու մեծ գումարներով խաղեր:
Ամօթ է Աղուիսին այսքան ստորանալ. ժամա-
նակ է ձեռք բաշխելու այդ անվայել պարսպ-
մունքից. չէ որ Աղուիսը վատ օրինակ է տա-
լիս և չղկալաբան:

Մի քանի տարի տառջ, ահագին նիւթական
գոհարներով յանձն առնելով, հասարա-
կութիւնը բանալ տուեց պօստ-հեռագրատուն և
այժմ այդ հիմնարկութիւնը մօտ 5000 բուրջի
եկամուտ է տալիս կառավարութեան. բայց
պօստը ստացվում է շատ անոնիս կերպով. ոչ
դր չը գիտէ հաստատու թէ որ օրն է պօստը գալու:
Դրա պատճառը այն է, որ Օրդուբաթում պա-
հում են միայն 6 ձի, որոնք չեն կարողանում
իր ժամանակին պօստը բերել: Քանի անգամ
հասարակութիւնը բողբոջ է պօստ-հեռագրա-
տան վարչութեան, բայց մինչև օրս բաւակա-
նութիւն չէ տրվել հասարակութեան արդար
բողբոջին: Արկին հրաւիրում ենք վարչութեան
ուշադրութիւնը: Զօկ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋՆԻԱՆԻՑ

Նոյեմբերի 20-ին
Մեղանում դեռ գոյութիւն ունի անդրապատ-
մական թոնիրը. տան կենտրոնում կլոր ձևով
փորձած Նոյի խորութիւնը լինում է սովորաբար
2—2½ արշին: Ամեն տարի նահապետական
թոնիրները զոհեր են կրանում մեր գիւղական
ընտանիքներից, մանաւանդ փոքր մանուկների
չըղանից, որոնք զորովելով վառած թոնրի մէջ,
ողջողջ խորովում են: Դեռ տարին չէ լրացել
եւր «Վօչա-Գիլա» թուրքաբանակ զիւղում մի ե-
րեք տարեկան երեխայ խորովելից: «Մամարգա-
Գիլա» զիւղում ծնողների բացակայութեան ժա-
մանակ, մնում է տանը մէկ մենակ 12 տարե-
կան հիւանդ աղջիկը. երբ հիւանդի դողցը
հանում է, նա իսկոյն աստամները չըրկացնելով
վաղում է դէպի վառած թոնիրը, խուփը մի
կողմ քաշում ու մէջքը տարածում թոնրի վրա
տաքանալու, մի երկու բուլէ անցած-չանցած,
հիւանդը գորովում ընկնում է վառած թոնրը...
Հարեանքները լսելով կենդանի այրվող բղաւցը,
վրա են հանում, զրայք քաշում, բայց արդէն
ուշ է լինում. այրված, կծկված զոհը մի երկու

է ընտրէր Օյլկինը, որպէս մենամարտի հրաւեր
ստացող և նա ընտրեց արծառնակ, իսկ ինչ
վերաբերում է տեղին, ինքը, պանդոկապետը կը
գալ պ. Դիւրանի ետևից:

Այս խօսքերով նա իսկոյն անյայտացաւ, չը
լսելով նոյն իսկ նաւապետի պատասխանը:

Հետեւեալ առաւօտ Դիւրանը նամակներ
գրեց Փրանսիա իր ծնողներին և բարեկամներին
և, ի նկատի ունենալով, որ կարող է սպանվել
կամ ծանր վիրաւորվել, գրաւոր մի քանի կար-
գաղթութիւններ արեց: Կէսօրին նա կամեցաւ
խօսել պանդոկապետի հետ, բայց նրան ասա-
ցին, որ նա քաղաքից հեռացել է և կը վերա-
դառնայ երեկոյան: Այդպէս էլ եղաւ. պանդո-
կապետը վերադարձաւ երեկոյան, հետը բերե-
լով նոր հիւրերի մի մեծ խումբ, որը ամբողջ
պանդոկին կենդանութիւն տուեց. մինչև այդ
լուռ փողոցներումն էլ մի արտասովոր շարժում
էր նկատուի:

Վերջապէս եկաւ օրհասական առաւօտը:
Դիւրան խնամքով ուղղեց շորերը և սկսեց
սպասել. մօտաւորապէս ժամը 9-ին ներս մտան
պանդոկապետը և միւս վկան և հարցրին՝ պատ-
րաստ է արդեօք:

—Պատրաստ եմ, պատասխանեց նա:
—Գնանք ուրեմն:

Վկաները արագ դուրս եկան, իսկ նա հե-
տեւեց նրանց: Անցնելով մեծ փողոցը և մի քա-
նի նրբափողոցներ, նրանք մօտեցան մի մեծ
հրապարակի, որի մէջտեղում, ինչպէս վերև յի-
շելի, կանգնած էր կրկնաբ, որին և դիմեցին:

Ժամ էլ դժուարին չարչարանքներ կրելուց յետոյ
մեռնում է: Այս նոյեմբերի 13-ին թմբուլ գիւ-
ղում մի 50 տարեկան կին, որը հայ կնոջ յա-
տուկ անձնագրութեամբ ահա 30 տարուց աւե-
լի է, որ խնամում էր իր անդամալոյս, դառա-
մեալ ամուսնուն, կերակրելով նրան զանազան
անձանց օժանդակութեամբ, երեկոյան ժամը
4-ին կամենալով թոնրից հանել չուգունի ամա-
նը, որ լի էր հալած տաք խոլով, զլիւլվայր
զորովում է վառած թոնրը իւղի մէջ... Այր-
վում են ձեռքերը, դէմքը, գլուխը.— աղ-
ջոցին դարցի մի կին, լսելով այրվող օրհասա-
կան ձիւք, ներս է մտնում և հանում նրան
բողբոջի միջից. այժմ այդ կինը հիւանդ անկող-
նում տանջվում է կրակի պատճառած բաղժա-
թիւ վերքերից. անցեալ ամառ նոյն թմբուլ
գիւղում մի 6 տարեկան թուրքի աղջիկ ոտքը
դնելով վառած և աղա ծածկած թոնրի խուփի
վրա, կոտորում է իսկույն և թրմակալով ընկնում
է մարմնով կրակների մէջ. չը նայած որ իսկոյն
դուրս են քաշում, բայց աղվայթ երկու ոտները
արդէն այրված են լինում. և ահա 5 ամիս է
բժշկվում է աղջիկը տնային դաւաքների դեղե-
րով, առանց մի զգալի օգուտ ստանալու. փա-
ցել են երկու ոտներն էլ:

Եւ որ կողմն էլ դիտելու լինէք, աչքի կընկ-
նեն շատ այսպիսի դէպքեր, որոնց զոհերը զը-
խաւորապէս կազմում են փողոցիկները, իսկ տե-
ղացի աղաքանակութիւնը չէ կարողանում ա-
զատվել նոյն իսկ թոնրի պէս թշնամուց...

Ժամատարու ձայնը այստեղ էլ հասաւ. պա-
տերի վրա կայքած յայտարարութիւնները պա-
հանում են առողջապահական կանոններին
համապատասխան կենդանակալութիւն. բայց
դարձեալ նոյն նեխած, հոտած փողոցները, բա-
կերը, տները և իրանց կեղտերով հոչակված
նոյն անդղջը հեղեղեան բաղնիքները...

Ա. Տէր-Ստեփանոսեանց

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Արդաւի, նոյեմբերի 21-ին
Պարսկաստանի Արդաւի քաղաքի գրադարան-
ընթերցարանի համար խնդրում ենք նուէրներ
թէ գրքերով, թէ լրագիրներով և թէ դրամով:
Քաղաքին 30 տուն բնակիչները իրանց նիւթա-
կան նեղ միջոցներով հազիւ-հազ կարողանում
են իրանց միջոցներով ուսումնարանի անհրա-
ժեշտ պէտքերը հոգալ, այնպէս որ գրադարան-
ընթերցարանի համար ստիպված ենք դիմել
օտարաքաղաքացիների օգնութեան: Որ հայ
սիրտը որ մօտ է մի այսպիսի հիմնարկութեան,
խնդրում ենք՝ չը դառնայ օգնելու: Նոյն խնդ-
րում ենք հեղինակներից և խմբագիրներից:
Մեր հասցեն՝ В. Русскую Астарту, М. Агаро-
нову, для передачи Ардабильской библиотеки.

Ի դիմաց վարչութեան՝ Գ. Գաբաշեան
Ա. Ելիւրեղեան

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Մօղղօկ, նոյեմբերի 25-ին
Թիլ տուէր յայտնել որ «Մշակ» № 210-ի մէջ
եկամերիտոյարից հաղորդած այն լուրը, թէ մեր
թեմի սրբազան Առաջնորդը արդեւ չէ քահանայե-
րին և Եւ ծխականի տօնին նշխար տանել, սխալ
է: Յիշված լուրի մտքի համաձայն, Առաջնորդը

բացելով փողոցի դուռը նրանք մտան մի նեղ և
մութ նախասենեակ. Դիւրանը տատանվելով հե-
տեւեց նրանց, շատ հաւանական է, որ վկաները
նկատեցին նրա անվճարականութիւնը, որովհետեւ
իսկոյն բռնեցին աղաւթ նաւապետի ձեռքերից,
չտալ ներս տարան և, չանցած մի քանի վայր-
կեան, նախ քան Դիւրանը ուշքի եկաւ, նրանք
արդէն կրկնումն էին, որը էլ եր հանդիսա-
կաններում: Դիւրանի և նրա ուղեկիցների երե-
ւալուն պէս—օղը թողաց ծափահարութիւննե-
րից և ուրախ բացականչութիւններից:

Նաւապետը կանգնած էր, ինչպէս շանթա-
հարված, չը հասկանալով, թէ ինչ է կատար-
վում իր շուրջը:

—Ինչ է նշանակում այս յիմար կատակե-
րութիւնը, մրմնջաց նա, դիմելով պանդոկա-
պետին: Բայց պանդոկապետը այլ ևս չէր լսում
նրան և նշանով խնդրեց, որ հանդիսականները
լռեն: Նրա աղուկը քիչ հանդարտվեց, նա բար-
ձր ձայնով ասաց հետեւեալ.

—Ձեռնալեզներ, պատիւ ունեմ ներկայացնե-
լու ձեզ ֆրանսիացի հաշակաւոր և քաջ նաւա-
պետ՝ պարոն Դիւրանին, որը միակ կենդանի
մնացածն է Քէյսօֆէնի կուր մէջ եղած զըն-
դունից. նա այժմ պատիւ կունենայ ձեր առաջ
փոխանակվել գնահանքով մեր քաղաքի յարգե-
լի բնակիչ պ. Ջօնաթան Օլիկինի հետ:

Հանդիսականների կողմից նորից լսվեցին
ծափահարութիւններ: Այդ բոլորն անցնելու հա-
կառակ կողմի դուռը և ներս մտաւ Օլիկին
հաշակաւոր տարօրինակ հագուստով՝ իր ընկեր-

խաղաղ զրկում է իր թեմի քահանայներին իրանց
եկամուտի մի որոշ աղբիւրից, մինչդեռ չըլա-
բերական հրամանում, որը եւս ևս ստացել եմ,
պարզ ասված է, որ քահանան իրաւունք չունի
իր ծխական չեղած մէկի տօնին նշխար
տանել նրա տունը և օրհնել տօնատէրին շահի
նպատակով: Այս և յիշված լուրի բովանդա-
կութիւնը, ի հարկէ, մի և նոյն չէ: Բնականա-
ապր, սրբազան Առաջնորդն աշխատում է, որ
քահանաները լաւ ապրուստ ունենան, ապահով-
ված լինեն, ինչպէս որ միշտ, հարկը պահանջած
ժամանակ յայտնել է թէ մանաւոր և թէ պաշ-
տօնապէս:

Չորրորդ տարին է, ինչ Արիստակէս որբա-
նանք առաջնորդ է Աստրախանի թեմում, բայց
մինչև այսօր դեռ ոչ մի քահանայ չէ ձեռնա-
դրել, որովհետեւ նախ մի քանի առաջարկված-
ները եղել են անհաւաստաւորաբար քահանայա-
կան կոչման և երկրորդ՝ եթէ բանը մեր ժողո-
վրդին մնայ, նա մէկի տեղ հինգ քահանայ կու-
ղի, նրա ինչ փոյթն է, թէ քահանային էլ աղ-
բուստ է հարկաւոր:

Վահան քահ. Առկարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բժշկապետ Յ. Գասպարեանց ուղարկել է մեղ
100 բ., որպէս զի այդ փողով 1899 թ.ի «Մշա-
կի» տան օրինակ, իր կողմից իբրև նուէր,
ուղարկեց քահանային հիմնարկութիւններին և
զպրոցներին: Մենք կը յայտնենք, թէ որտեղ
պէտք է ուղարկվեն «Մշակ» այդ օրինակները:

Ներկայումս Պետերբուրգում տեղի ունի աղ-
արդիւնարներու ճանապարհական ժողով, որ
ընկնում է Ռուսաստանի աղանալութեան վերա-
բերեալ խնդիրները: Հիմնական հարցերից մէկն
է միջոցներ որոնել, որ Ռուսաստանի կենտրո-
նական աղանալները չը մնան հեռու տեղ
գտնվող հանքերին իրանց մօտիկութեամբ սպա-
ռողներից: Օրինակ՝ Գոմի լեռնախորտերում գործ-
վող քարէ աղն աւելի է ժամ և ձեռնտու կերպով
կարելի է ծախել սպառողին, քան Աստրախանի
աղը, որ պէտք է իր դնի մէջ պարունակի թէ
մշակութեան ծախսերը և թէ ճանապարհածախ-
սը: Ժողովը ընտրեց մի յատուկ յանձնաժողով,
որը պէտք է մանրամասն տեղեկութիւններ հա-
ւաքի աղի արծողութեան մասին զանազան
հանդամանքներում և ներկայացնի իր երաւակա-
ցութիւնները: Ժողովը աչքի առաջ ունենալով
որ չողենաւոր կէտանցնեն աղի տեղափո-
խութեան ծախսերը, որոնց խնդրամատոյց լի-
նել միւլիտորութեան առաջ, որ չարդելի Սև
ծովի ափերից աղ ուղարկել Բալթիկ ծովի ափե-
րը ոչ միայն արդար, այլ և արտասահմանում
Ֆիրմաների շրջանաւորով:

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, աչքի ա-
ռաջ ունենալով ժողովրդի առողջապահութիւնը և
կանխաւոր հակողութիւն մտցնելով, արգելեց տը-
նային անասունների մորթելը քաղաքի զանազան
մասերում և կենտրոնացրեց ամբողջ մսագոր-
ծութիւնը սպանդանոցում: Ենթադրւում էր, որ
համա-
գամանքի այժմ մի քանի տեղեր ազատվել են
կեղտոտութիւններից, մորթված կենդանիները
ենթարկվում են մանրամասն ընտրութեան և
մշակակար միւսը ոչնչացվում է: Իսկ երբ կա-

նքի ուղեկցութեամբ: Այժմ միայն Դիւրանը
հասկացաւ բանի էությունը. բարկութիւնը և
յուզումնալից համարեա խեղճվելով, նա խիստ
բռնաբերով իր մօտ կանգնած պանդոկապետի
կրծքին, կայծակի արագութեամբ սրացաւ դէպի
դուռը և մի ակնթարթում անյայտացաւ:

Այժմ դուք գուշակում էք, պարոններ, թէ
ինչ էր պատահել. պանդոկապետը այցելել էր
Օլիկինին և դրանով հիւանդի միտք էր յղալը
վերջինիս մէջ: Նրանք վճռել էին օգտվել մե-
նամարտութիւնից իրանց նպատակների համար.
նոյն իսկ այդ դէպքեր մի քանի բանաւորներ էին
ուղարկել կրկնել, տեղանքները նորոգելու հա-
մար. իսկ իրանք, առանց ուշանալու. գնա-
ցել էին մօտակայ քաղաքը յայտարարութիւն-
ներ տղաբերու, որոնց մէջ ժողովրդին տեղե-
կացնում էին, թէ հետեւեալ օրը պէտք է տեղի
ունենայ մենամարտութեան մի նոր տեսարան
հաշակաւոր քաջ նաւապետ ֆրանսիացի Դիւ-
րանի, որը միակ կենդանի մնացածն է Քէյս-
օֆէնի կուր մէջ եղած յաղթական գնդից, և
պատուելի պ. Օլիկինի մէջ. մուտքը արժէ 2
զօլալար: Նրանք յայտարարութիւններ էին դե-
տեղել նոյնպէս տեղական երկու եղապրներում,
որոնցից մէկը Քէյսօֆէնի մօտ եղած կուր
նուիրել էր մի առաջնորդող յօդուած, իսկ միւ-
սը՝ մի ֆելիետօն, նաւապետ Դիւրանի այդ կրո-
ւում ցոյց տուած հերոսութեան մասին: Յօ-
դուածների և յայտարարութիւնների աջողու-
թիւնը արտաքայ կարգի էր: Երեկոյան ժամա-
նեց յատուկ գնացքը, լի հետաքրքրվողներով,

չորով քաղաքային խնամալարութեան իրադո-
ւել կատարելադրված սպանդանոցի շինու-
թեան ծրագրերը, որ արդէն մշակված է, այն
ժամանակ մսագործութեան վերաբերեալ բոլոր
գործերը կը տանաւ կատարեալ կազմակերպու-
թիւն:

Մենք ստացանք Թարկիւի Հայուհեաց Բարե-
գործական ընկերութեան տեղեկագիրը 1897—
1898 տարեշրջանի համար: Ընկերութիւնը մուտք
ունեցել է 26041 դոան (5200 բուրջի), իսկ
ծախք 19758 դոան (4000 բ.): Նրա գործու-
նէութեան ասպարէզը բաւական լայն է. նա
պահում է Թարկիւում արհեստանոց աղկանց
համար, ուր բացի կար ու ձեւից ստրեղծում
են նաև զորգագործութիւն, ունի մանկապար-
տէղ և բացի դրանից նա օգնում է և տառա-
պեալներին, զխաւորապէս Թիւրքիայից փախած
հայ գաղթականներին: Ի նկատի ունենալով, որ
Աստրախանի հայերի մեծ ժառի նիւթական
վիճակը խիստ անապահով է, ցանկալի էր, որ
ընկերութիւնը աւելի լայնացնէ իր գործու-
նէութիւնը, հաստատելով մի քանի զիւսուոր
զիւղերում տարրական դպրոցներ. այդ դէպ-
քում հայ հասարակութեան վրա բարոյական
պարտաւորութիւն կայ աջակցել ընկերութեան
իր նուէրներով: Տեղեկագիրը տղված է Թաւ-
րիւի հայոց Արամեան տղաբանու:

Ներքին գործերի մինիստրութեան մէջ ներ-
կայումս մշակվում է մի հրահանգ, որով եկող
տարվանից սկսած պէտք է ղեկավարվեն քաղա-
քային վարչութիւնները ժամանաւոր անձանց դա-
նազան կօնցեւորներ տալու դէպքում, ինչպէս
օրինակ՝ ձիաբարձի, երեքտրական լուսաւորու-
թեան, փողոցները սալադրածելու և ջրանցե-
րներ շինելու կօնցեւորներ:

Թիֆլիսում բացի ծաղիկ հիւանդութիւնից, որը
շատ տարածված է, սկսել են երևալ և կոկորդային
վտանդաւոր հիւանդութիւններ, օրինակ՝ սկար-
լատինա, դիֆտերիա, որոնց դէմ կարեւոր է մի-
ջոցներ ձեռք առնել, որպէս զի դրանք ևս չը
վարակեն ամբողջ քաղաքը, ինչպէս այդ արեւ
է ծաղիկը:

ԳԱՆՁԱԿԻՑ մեղ հաղորդում են, որ խաղողի
բերքը թէ քաղաքայիններն այդինքնում և թէ
հարեան Նիկինիզօֆի կերմանական կօնցեւոր-
ում, բաւարար էր և նոյն իսկ առաւ Գինի
ստացվեց մեծ քանակութեամբ: Գինի առնողներ
դեռ քիչ են: Գինին ծախվում է այժմ վերջին
1 բուրջի մինչև 1 բ., 50 կօպէկ: Վաճառվում
է և աւելի էժամ ու աւելի թանկ, բայց շատ
քիչ. միջին գինը պէտք է համարել 1 բ. 20 կօ-
պէկ վերջին:

ԱՍԱԿԱՍԱԿԻՑ մեղ գրում են. «Գեօնդուրա»
զիւղացի Պապիկ Սուքիասեան 12 տարի առաջ
մուրհակով 80 բուրջու ձող և ցորեն ու գարի
է առել մի վաշխառու խանութպանից՝ իր եղ-
բոր որդի Ալեքսանին ամուսնացնելու համար:
Մինչև այժմ վաշխառուն այդ 80 բուրջու և իր
տոկոսի տեղ իր զոհից առել է 4 հատ եղ՝ 180
բուրջի արծողութեամբ, 2 հատ գոմաւեղ՝ 120

իսկ առաւօտեան, ներկայացման սկսվելուց մի
ժամ առաջ, բոլոր տեղերը վաճառված էին 2-ա-
կան զօլալարով: Այս անցքից յետոյ, Դիւրանը
չտալ հեռացաւ քաղաքից խուլ ճանապարհնե-
րով, չը կատարելով Տեխասում ձիեր գնելու
զիտաւորութիւնը, իսկ ինչ վերաբերում է Օլի-
կինին և պանդոկապետին՝ նրանք Դիւրանի
անյայտանալուց յետոյ, մի քանի բուլէ ա-
նախորժ զրութեան մէջ մնացին: Հանդիսա-
կանների մի մասը ծիծաղում էր, միւսը տըր-
տունը արտայայտում. մի քանիսը յետ պահանջե-
ցին փողերը, միւսները կամենում էին, որ մե-
նամարտութիւնն անպատճառ տեղի ունենայ,
ասելով որ իրանք կը բաւականան, եթէ նոյն
իսկ մենամարտութեան դուրս գան պանդոկա-
պետը և Օլիկին. մի խօսքով առաջացաւ անա-
սելի խառնակութիւն, և ինձ պատմեցին, որ
մօտակայ քաղաքներից եկած յատուկ թղթակից-
ները, այնու ամենայնիւ, վեռադառնալով տուն,
ինչ որ գնդակներ և դանակի հարուածներ
մասին յօդուածներ տպեցին:

Անդլիացիներ վերջացրեց: Այդ բոլորն գնացքը
կանգ առաւ և ուղեցոյցը կոչեց «Bruxelles!»
Ամերիկացիները, որոնք մեծ բաւականու-
թեամբ լսում էին անդլիացուին, պէտք է իջնէին.
բայց գնալուց առաջ նրանք ամուր սեղմելով
նրա ձեռքը, ասացին.

—Այո, դուք խօսքի տակ չը մնացիք, դուք
հատուցիք փոխարէնը:

Ա. Մելք-Օսան.

Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.